

ՊԱՐԳԵՎ ՍԱՐՈՅԱՆ

Երևանի պետական համալսարանի իրավագիտության
ֆակուլտետի Սահմանադրական իրավունքի ամբիոնի
ասպիրանտ

ՎԱՐՉԱԿԱՆ ԱԿՏԻ ՎԱՐՉԱԿԱՆ ԲՈՂՈՔԱՐԿՄԱՆ ԵՎ ԴԱՏԱԿԱՆ ԿԱՐԳՈՎ ՎԻՃԱՐԿՄԱՆ ԺԱՄԿԵՏՆԵՐԸ

Վարչարարությամբ պատճառված վնասի հատուցման նախապայմանն այն իրավական ակտը, գործողությունը կամ անգործությունը ոչ իրավաչափ ճանաչելն է, որով պատճառվել է վնասը: Այս համատեքստում մեծ կարևորություն է ձեռք բերում օրենսդրությամբ սահմանված ժամկետում և կարգով վնաս պատճառած վարչական ակտի վիճարկումը: ՀՀ օրենսդրության վերլուծությունը ցույց է տալիս, որ վարչական ակտի վարչական և դատական կարգով վիճարկման համար նախատեսված ժամկետները միասնական չեն, ինչը կարող է խնդիրներ հարուցել վարչական ակտի վիճարկման գործընթացում:

Հիմնաբառեր – նյութաիրավական ժամկետ, դատավարական ժամկետ, վարչական ակտի վարչական բողոքարկում, վարչական ակտի դատական կարգով վիճարկում, հայցադիմումը վերադարձնելու մասին որոշում, հայցադիմումը վարույթ ընդունելը մերժելու մասին որոշում, բաց թողնված ժամկետի վերականգնում:

Հայաստանի Հանրապետության վարչական դատավարության օրենսգրքի¹ 72-րդ հոդվածով սահմանվում են վարչական դատարան հայց ներկայացնելու ժամկետները: Այդ հոդվածը տարբեր հայցատեսակների ներկայացման համար նախատեսում է տարբեր ժամկետներ: Վարչական դատարան հայց ներկայացնելու ժամկետների կապակցությամբ մեզ հետաքրքրում է այդ ժամկետների իրավական բնույթի հարցը, ուստի հաշվի առնելով, որ տարբեր հայցատեսակների համար սահմանված ժամկետները միևնույն բնույթն ունեն, քննարկման ընթացքում մեզ համար որպես օրինակ կդիտարկենք վիճարկման հայց ներկայացնելու համար սահմանված երկամսյա ժամկետը:

Վարչական դատարան վիճարկման հայցով դիմելու ժամկետի իրավական բնույթի վերաբերյալ գիտության մեջ առաջ են քաշվել տարբեր մոտեցումներ: Այդ մոտեցումների տարբերակման հիմքում ընկած է այն խնդիրը, թե վարչական դատարան դիմելու ժամկետն իր բնույթով նյութաիրավական, թե դատավարական ժամկետ է: Այդ խնդրի լուծման եղանակից կախված՝ տարբեր կերպ է լուծվում նաև այդ ժամկետը բաց թողնելու հետևանքների հարցը: Վարչական ակտի վիճարկման հայց ներկայացնելու ժամկետը դատավարական ժամկետ համարելու դեպքում դրա բացթողման հետևանքը պետք է լինի հայցադիմումը վերադարձնելը կամ այն վարույթ ընդունելուց հետո գործի վարույթը կարճելը, իսկ քննարկվող ժամկետը որպես նյութաիրավական ժամկետ դիտելու պայմաններում դրա բացթողումը կհանգեցնի ներկայացված հայցի մերժման, սակայն գործն այդ դեպքում կքննվի ըստ էության: Այլ կերպ ասած՝ վարչական դատարան դիմելու ժամկետը դատավարական կամ նյութաիրավական դիտելու տարբերությունը դրսևորվում է դրա բացթողման արդյունքում առաջացող հետևանքների մեջ. առաջին դեպքում գործը դատարանում ընդհանրապես չի քննվում, և գործի վարույթը ավարտվում է այն պահին, երբ դատարանը հաստատում է ժամկետի բացթողման փաստը, իսկ երկրորդ դեպքում գործը քննվում է ըստ էության, սակայն հայցը մերժվում է:

Այսպիսով, վիճարկման հայց ներկայացնելու ժամկետի իրավական բնույթի վերաբերյալ գիտության մեջ առկա մոտեցումները հետևյալն են. առաջին մոտեցման համաձայն՝ այն պետք է դիտարկել որպես հայցային վաղեմության կրճատ ժամկետ: Երկրորդ տեսակետը հանգում է նրան, որ վիճարկման հայց ներկայացնելու ժամկետը դատավարական ժամկետ է: Գրականության մեջ քննարկվում է ևս մեկ տարբերակ, ըստ որի՝ վարչական դատարան դիմելու ժամկետը հայցային վաղեմության ժամկետից տարբերվող այլ նյութաիրավական ժամկետ է, որը դատարանը կիրառում է առանց մյուս կողմի միջնորդության:

Վիճարկման հայց ներկայացնելու ժամկետը կրճատ հայցային վաղեմության ժամկետ դիտելու մոտեցման առավելություններից մեկն այն է, որ այդ դեպքում վարչական ակտի վիճարկման վերաբերյալ գործը քննվում է ըստ էության, և գործն ըստ էության լուծող դատական ակտով կարող է գնահատական տրվել վարչական ակտի իրավաչափությանը: Սակայն հարկ է նկատի ունենալ, որ այդ մոտեցումը ունի նաև թերություն: Խոսքը վերաբերում է նրան, որ վիճարկման հայց ներկայացնելու ժամկետին այդ տեսանկյունից մոտենալու պարագայում զգալիորեն կարող է կրճատվել վարչական ակտի վիճարկման հայց ներկայացնելու հնարավորություն ունեցող անձանց շրջանակը, քանի որ, ինչպես հայտնի է, հայցային վաղեմության ժամկետը բաց թողնելու հարգելի պատճառ են համարվում միայն հայցվորի անձի հետ անխզելիորեն

ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅՈՒՆ

կապված հանգամանքները: Դա նշանակում է, որ եթե առկա է վիճարկման հայց ներկայացնելու ժամկետի բացթողման հարգելի, սակայն ոչ հայցվորի անձի հետ անխզելիորեն կապված պատճառ, ապա այդ ժամկետը ենթակա չէ վերականգնման:

Բացի այդ, ինչպես իրավացիորեն նշում է Ա. Վ. Սկվորցովը, քննարկվող ժամկետը չի կարող որակվել որպես հայցային վաղեմության կրճատ ժամկետ, քանի որ դրա նկատմամբ կիրառելի չեն հայցային վաղեմության ընդհատմանը վերաբերող քաղաքացիական օրենսդրության դրույթները: Ինչպես հայտնի է, հայցային վաղեմության ժամկետի ընթացքն ընդհատվում է սահմանված կարգով հայց հարուցելով կամ պարտապանի կողմից պարտքը ճանաչելու մասին վկայող գործողություններ կատարելով: Ս. Վ. Սկվորցովի այնուամբ հայցային վաղեմության ժամկետի ընդհատման վերոհիշյալ հիմքերը վերաբերում են գույքային բնույթ ունեցող քաղաքացիաիրավական հարաբերություններին: Մենք համաձայն ենք նշված տեսակետին, քանի որ վարչական ակտի վիճարկումը ենթադրում է անձի և վարչական մարմնի միջև ուղղահայաց իրավահարաբերությունների առկայություն: Այստեղ առկա չեն պարտավորական հավասար հարաբերություններ, հետևաբար վարչական մարմինը չի կարող անձի նկատմամբ ճանաչել իր պարտքը: Ավելին, եթե նույնիսկ վերանանք վարչական մարմնի և անձի միջև առաջացող իրավահարաբերությունների հանրային-իրավական բնույթից և փորձենք «պարտք» եզրույթը ինչ-որ կերպ կիրառելի դարձնել այս հարաբերությունների նկատմամբ, առավելագույնը որպես վարչական մարմնի կողմից իր պարտքի ճանաչում կարող ենք դիտել վերջինիս կողմից ոչ իրավաչափ վարչական ակտի անվավեր ճանաչումը, որն էլ ոչ թե հայցային վաղեմության ժամկետի ընդհատման, այլ վիճարկման հայցի մերժման հիմք կդառնա, քանի որ այն, ըստ էության, նման պայմաններում կդառնա առարկայագուրկ:

Այսպիսով, ակնհայտ է, որ քաղաքացիական օրենսդրությամբ սահմանված հայցային վաղեմության ժամկետի վերաբերյալ կանոնները վարչական դատարան վիճարկման հայց ներկայացնելու ժամկետի նկատմամբ չեն կարող կիրառելի լինել:

Ինչպես նշեցինք, իրավաբանական գրականության մեջ քննարկվում է նաև վիճարկման հայց ներկայացնելու ժամկետը դատավարական ժամկետ համարելու հարցը: Դատավարական ժամկետը օրենքով սահմանված կամ դատարանի կողմից նշանակված այն ժամանակահատվածն է կամ ժամանակի կոնկրետ պահը, որի ընթացքում կամ հենց այդ պահին դատարանը կամ դատավարության այլ մասնակիցներն իրավունք ունեն կամ պարտավոր են կատարելու առանձին դատավարական գործողություններ: Նշված սահմանումից ելնելով՝ Ա. Ա. Ալեշկինը նշում է, որ ժամկետը դատավարա-

կան համարելու չափանիշը դրա ընթացքում դատավարական գործողությունների կատարումն է: Բացի այդ, անհրաժեշտ ենք համարում նաև ընդգծել, որ դատավարական ժամկետները իրավունքի գիտության մեջ բնորոշվում են որպես իրավադարեցնող ժամկետներ, քանի որ դրանց լրանալով անձը զրկվում է համապատասխան դատավարական գործողությունը կատարելու իրավունքից: Այդ իրավունքը դադարում է գոյություն ունենալուց: Բ. Ա. Ֆեդորովիչը նշում է, որ դատարան դիմելու ժամկետը սահմանող նորմը չի կարգավորում որևէ դատավարական գործողություն կատարելու կարգը, այլ սահմանափակում է դատարան դիմելու անձի իրավունքը, այլ կերպ պատճառ՝ սահմանափակում է անձի հայցի իրավունքը⁶: Հեղինակը այնուամբ է, որ այդ ժամկետն անհրաժեշտ է տարբերակել իրավադարեցնող ժամկետից, որի լրանալը հանգեցնում է անձի նյութական իրավունքի դադարեցման: Քննարկվող ժամկետի ընթացքում դատարանն իրականացնում է խախտված իրավունքների հարկադիր պաշտպանություն, իսկ դրա լրանալու կապակցությամբ դատական պաշտպանության դիմած անձի հայցի մերժումը չի ազդում անձի իրավունքի գոյության վրա:

Եթե ամբողջացնենք վերոհիշյալ դիրքորոշումները, ապա կարող ենք փաստել, որ դատարան դիմելու ժամկետի նյութաիրավական, այլ ոչ թե դատավարական լինելն արտահայտվում է նրանում, որ դրա ազդեցությունը դրսևորվում է նյութական իրավունքի ոլորտում: Դատական պաշտպանության իրավունքը անձի նյութական իրավունքի անբաժանելի մասն է, որի կորուստը ազդում է խախտված իրավունքի ներքին բովանդակության վրա՝ թուլացնելով դրա գոյությունը: Հետևաբար, դատարան դիմելու ժամկետի լրանալը, զրկելով անձին իր իրավունքների հարկադիր պաշտպանությունից, ազդում է խախտված իրավունքի վիճակի վրա՝ չդադարեցնելով դրա գոյությունը: Այլ կերպ կարող ենք ասել, որ անձը չի զրկվում իր իրավունքից, սակայն զրկվում է դրա հարկադիր պաշտպանություն ստանալուց (նյութաիրավական առումով հայցի իրավունքից), բայց, միևնույնն է, դատավարական առումով հայցի իրավունքը պահպանում է: Ելնելով դրանից՝ Բ. Ա. Ֆեդորովիչը եզրահանգում է, որ դատարան դիմելու ժամկետի բացթողման պատճառների հարգելի լինելու և, ըստ այդմ, ժամկետը վերականգնելու հարցին դատարանը պետք է անդրադառնա ոչ թե միջանկյալ դատական ակտով, այն է՝ պատճառը հարգելի չհամարելու դեպքում հայցադիմումը վերադարձնելու մասին որոշմամբ կամ այն վարույթ ընդունելուց հետո գործի վարույթը կարճելու որոշմամբ, այլ պետք է իրականացնի գործի ըստ էության քննություն և այդ հարցին լուծում տա վերջնական դատական ակտով: Ա. Վ. Սկվորցովը նույնպես պաշտպանում է նշված տեսակետը՝ դա պատճառաբանելով նրանով, որ հայցի հարուցումը

դատավարական գործողություն չէ, այլ անձի խախտված իրավունքի դատական պաշտպանության իրավունքի իրականացման դատավարական ձևը, ինչը նշանակում է, որ դատարան դիմելու ժամկետն անցած լինելու պատճառաբանությամբ ներկայացված հայցը վերադարձնելը կամ գործի վարույթը կարճելը անձին կգրկի դատական պաշտպանության իրավունքից: Դրանից ելնելով՝ հեղինակը, ով ժխտում էր քննարկվող ժամկետը նաև կրճատ հայցային վաղեմության ժամկետ լինելու վերաբերյալ արտահայտված կարծիքները, սակայն, միևնույն ժամանակ, կողմ էր դրա նյութաիրավական բնույթին, առաջարկում է այն դիտարկել որպես հայցային վաղեմության ժամկետից տարբերվող այլ նյութաիրավական ժամկետ, որը դատարանը կիրառում է առանց կողմի միջնորդության¹⁰:

Այսպիսով, գիտության մեջ առկա մոտեցումների ամփոփման արդյունքում կարող ենք գալ այն եզրահանգման, որ հեղինակների գերակշիռ մասը մերժում է դատարան դիմելու ժամկետի դատավարական բնույթն այն հիմնավորմամբ, որ այդ ժամկետի լրանալով անձի խախտված նյութական իրավունքը չի դադարում, պարզապես անձը զրկվում է դրա հարկադիր պաշտպանությունից (նյութաիրավական առումով հայցի իրավունքից), սակայն ոչ դատարան դիմելու իրավունքից (դատավարական առումով հայցի իրավունքից), մինչդեռ դատավարական ժամկետի անցնելը անձին այդ ժամկետի ընթացում կատարման ենթակա գործողությունը կատարելու իրավունքից զրկում է: Այս ամենի արդյունքում վերջիններս եզրահանգում են, որ նույնիսկ քննարկվող ժամկետը լրացած լինելու պայմաններում դատարանը պետք է իրականացնի գործի ըստ էության քննություն և ժամկետի բացթողնման անդրադառնա գործն ըստ էության լուծող դատական ակտով:

Մենք այն կարծիքին ենք, որ վարչական դատարան վիճարկման հայցով դիմելու ժամկետի բնույթի վերաբերյալ վեճերն ինչ-որ առումով արհեստական են: Դա պայմանավորված է, առաջին հերթին, նրանով, որ մեծ նշանակություն ունի այն հարցը, թե ինչպես է օրենսդիրը կարգավորել ժամկետը բաց թողնելու հետևանքների հարցը: Գիտության մեջ խնդրո առարկա ժամկետի նյութաիրավական բնույթը պաշտպանող հեղինակները՝ որպես իրենց դիրքորոշումը հիմնավորող փաստարկ, շեշտադրում են այն հանգամանքը, որ իրենց երկրի օրենսդրությամբ վարչական ակտի վիճարկման համար դատարան դիմելու ժամկետի բացթողումը նախատեսված չէ որպես հայցի վերադարձման կամ գործի վարույթի կարճման հիմք: Այստեղից հարց է առաջանում, թե այն դեպքում, երբ համապատասխան օրենսդրական կարգավորումները փոփոխվեն, և սահմանվեն այդ ժամկետի բացթողնման այլ հետևանքներ, արդյոք դա հիմք է լինելու նաև գիտության մեջ ձևավորված մոտեցումները

փոխելու համար: Թերևս, տեսական բնույթի դատողություններում որպես ուղենիշ չեն կարող ընդունվել գործող օրենսդրական կարգավորումները, քանի որ դրանք կարող են փոփոխության ենթարկվել: Բացի այդ, ինչպես նշվեց, ի հիմնավորումն դատարան դիմելու ժամկետի նյութաիրավական բնույթ ունենալու հանգամանքի՝ նշվում է, որ դրա լրանալու արդյունքում անձի իրավունքը չի դադարում, այլ անձը զրկվում է դրա հարկադիր պաշտպանությունն ստանալու հնարավորությունից: Մենք գտնում ենք, որ այս համատեքստում որևէ նշանակություն չունի, թե անձը իր իրավունքների հարկադիր պաշտպանություն չի ստանա գործն ընդհանրապես չքննվելու, թե քննվելու, սակայն հայցը նույն պատճառաբանությամբ մերժվելու հետևանքով: Թե՛ հայցը վերադարձնելու կամ գործի վարույթը կարճելու, թե՛ հայցը մերժելու հիմքում ընկած է նույն պատճառը՝ ժամկետի բացթողումը, հետևաբար կարևոր չէ, թե ինչ եղանակով է մերժվում անձի իրավունքների հարկադիր պաշտպանությունը: Եթե նույնիսկ գործը քննվի ըստ էության, և դատարանի կողմից գնահատական տրվի վիճարկվող վարչական ակտի իրավաչափությանը, սակայն հայցը մերժվի վիճարկման հայց ներկայացնելու ժամկետն անցած լինելու պատճառաբանությամբ, ապա, միևնույն է, հայցվորը չի կարողանա այդ վարչական ակտով պատճառված վնասի հատուցում ստանալ, քանի որ դրա համար պահանջվում է վարչական ակտի անվավեր ճանաչում, որպիսի պահանջն անձին մերժվել է: Հետևաբար, այն պնդումը, որ անձը զրկվում է միայն նյութաիրավական առումով հայցի իրավունքից, սակայն նրա դատական պաշտպանության իրավունքը չի դադարում, այնքան էլ հիմնավորված չէ, որովհետև, վերջին հաշվով, անձին հենց վերջինիս իրավունքների հարկադիր պաշտպանությունն է մերժվում ժամկետը լրացած լինելու պատճառաբանությամբ:

Բացի այդ, կարևորն այն է, որ անձը բոլոր դեպքերում զրկված չէ իր գործի ըստ էության քննություն ստանալու հնարավորությունից, եթե նա ժամկետը բաց է թողել հարգելի պատճառով: Անկախ նրանից, թե զուտ տեսականորեն վիճարկման հայց ներկայացնելու ժամկետը մենք դիտում ենք որպես դատավարական, թե նյութաիրավական ժամկետ, այն ենթակա է վերականգնման, իսկ վարչական ակտով անձի խախտված իրավունքը՝ պաշտպանության, եթե ժամկետի բացթողնման պատճառը հարգելի է: ՀՀ վարչական դատավարության օրենսգրքով վիճարկման հայց ներկայացնելու ժամկետն ամրագրված է որպես դատավարական ժամկետ: Այն բաց թողնելը հիմք է ներկայացված հայցադիմումը վերադարձնելու համար, եթե չի ներկայացվել ժամկետը վերականգնելու վերաբերյալ միջնորդություն, իսկ միջնորդություն ներկայացված լինելու և դատարանի կողմից այն չբավարարվելու դեպքում հայցի ընդունումը մերժ-

ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅՈՒՆ

վում է: Եթե դատարանը գործի քննության ընթացքում է պարզում սահմանված ժամկետից ուշ հայցադիմումի ներկայացման հանգամանքը, ապա գործի քննության ցանկացած փուլում կարճում է գործի վարույթը: Այս իրավակարգավորումներից բխում է, որ ժամկետի վերականգնման մասին միջնորդությունը բավարարվելու դեպքում գործը քննվում է ըստ էության: Ընդ որում, օրենսգրքի համապատասխան դրույթները ժամկետի վերականգնումը կապում են միայն այն բաց թողնելու պատճառները հարգելի լինելու հանգամանքի հետ, և նշանակություն չի տրվում նրան, թե վիճարկվող վարչական ակտի՝ ուժի մեջ մտնելուց հետո ինչքան ժամանակ է անցել, այսինքն՝ անձը ինչքան է ուշացրել հայցադիմումի ներկայացումը: Ասվածից հետևում է, որ անձը, ով գտնում է, որ վարչական ակտով խախտվել են իր իրավունքները և օրինական շահերը, կարող է ցանկացած ժամանակ վարչական դատարան այդ վարչական ակտի վիճարկման հայց ներկայացնել՝ հայցի հետ միաժամանակ ներկայացնելով նաև բաց թողնված ժամկետը վերականգնելու մասին միջնորդություն, և եթե այդ միջնորդության քննարկման արդյունքում դատարանը գտնի, որ սահմանված ժամկետից ուշ հայցի ներկայացումը պայմանավորված է հարգելի պատճառով, ապա բավարարում է միջնորդությունը և իրականացնում գործի ըստ էության քննություն՝ անկախ վարչական ակտի ուժի մեջ մտնելուց հետո անցած ժամանակահատվածից: «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 71-րդ հոդվածով սահմանվում են վարչական ակտի բողոքարկման ժամկետները և վարչական ակտն անբողոքարկելի դառնալու կարգը: Համաձայն այդ հոդվածի 1-ին մասի՝ վարչական բողոքը կարող է բերվել վարչական ակտն ուժի մեջ մտնելուց հետո 2 ամսվա ընթացքում: Նույն հոդվածը նաև նախատեսում է, որ վարչական ակտի բողոքարկման ժամկետն անցնելուց հետո այն դառնում է անբողոքարկելի, սակայն անձը կարող է վերականգնել բողոքարկման ժամկետը այն հարգելի պատճառով բաց թողնելու դեպքում: Սակայն, մյուս կողմից, նույն հոդվածը նաև ամրագրում է դրույթ այն մասին, որ բողոքարկման ժամկետը լրանալուց մեկ տարի անցնելուց հետո անձը այլևս չի կարող բողոքարկել վարչական ակտը, քանի որ այդ դեպքում նա նաև զրկվում է ժամկետը վերականգնելու հնարավորությունից, եթե նույնիսկ այն իրականում հարգելի պատճառով է բաց թողել: Այս իրավակարգավորումից բխում է, որ վարչական ակտի բողոքարկման առավելագույն ժամկետը դրա՝ ուժի մեջ մտնելու օրվանից մեկ տարի երկու ամիս է: Նշված ժամկետն անցնելուց հետո վարչական ակտի բողոքարկման որևէ ընթացակարգ Օրենքը չի նախատեսում, առավել ևս, թույլ չի տալիս նույնիսկ հարգելի պատճառով բաց թողնված բողոքարկման ժամկետը վերականգնել: Դրան հակառակ՝ Օրենքի

101-րդ հոդվածով նախատեսվում է վարչական ակտով պատճառված վնասի հատուցման համար վարչական մարմին դիմելու 3-ամյա ժամկետ՝ անձի՝ իրեն պատճառված վնասի մասին իմանալու պահից սկսած: Քանի որ վարչարարությամբ պատճառված վնասի հատուցման նախապայմանը վնաս պատճառած իրավական ակտն անվավեր ճանաչելն է, որի համար, ինչպես պարզ դարձավ, անձը իր տրամադրության տակ կարող է ունենալ առավելագույնը մեկ տարի և երկու ամիս ժամանակ, ստացվում է, որ վարչարարությամբ պատճառված վնասի հատուցման համար դիմելու 3-ամյա ժամկետն ինքնըստինքյան կրճատվում է: Այլ կերպ ասած՝ անձը զրկվում է այդ ժամկետը լիարժեքորեն, սեփական հայեցողությամբ օգտագործելու հնարավորությունից, քանի որ մինչ այդ առկա է մեկ այլ՝ միջանկյալ, ժամկետ, որի չպահպանման դեպքում անձը կզրկվի պատճառված վնասի հատուցումից:

Սակայն Օրենքի 71-րդ հոդվածի և 101-րդ հոդվածի կարգավորումների միջև առկա ներքին հակասությունը վերացվում է վարչական ակտը դատական կարգով վիճարկելու դեպքում: Խնդիրն այն է, որ օրենքի 71-րդ հոդվածով սահմանված բողոքարկման ժամկետները վերաբերում են միայն վարչական ակտի վարչական կարգով բողոքարկմանը և չեն տարածվում դատական կարգով բողոքարկման վրա: Նման դիրքորոշում է հայտնել նաև ՀՀ վճռաբեկ դատարանը Օրենքի 71-րդ հոդվածի կիրառման իրավական վերլուծության համատեքստում: ՀՀ վճռաբեկ դատարանը մասնավորապես նշել է, որ օրենքի դրույթները չեն տարածվում դատավարական իրավունքի նորմերով կարգավորվող հարաբերությունների վրա, իսկ 71-րդ հոդվածը, սահմանելով վարչական ակտի բողոքարկման ժամկետները, ըստ էության, սահմանում է դրա վարչական բողոքարկումը՝ ակտն ընդունած մարմնին կամ ակտն ընդունած մարմնի վերադաս մարմնին: Ընդ որում, վարչական ակտի բողոքարկման համար նախատեսված ժամկետի բացթողումը վարչական ակտն անբողոքարկելի է դարձնում միայն վարչական կարգով :

Այսպիսով, ստացվում է, որ վարչական ակտի դատական կարգով վիճարկման դեպքում շահագրգիռ անձն այլևս կաշկանդված չէ որևէ ժամկետով, նրա վրա չի դրվում որևիցե ժամկետային սահմանափակում: Այս դեպքում արդեն վնասի հատուցման համար դիմելու եռամյա ժամկետը գործում է առանց ինչ-որ միջանկյալ ժամկետի, որի չպահպանումն անիմաստ է դարձնում առհասարակ եռամյա ժամկետի սահմանումը: Այս պարագայում անձի խնդիրը միայն նրանում է դրսևորվում, որ վերջինս ժամանակային առումով պետք է վարչական ակտի անվավեր ճանաչման հասնի այն հաշվով, որպեսզի այդ ընթացքում չլրանա վնասի հատուցում պահանջելու եռամյա ժամկետը:

Փաստորեն, ստացվում է հետևյալը. օրենսդիրը մի կողմից սահմանում է վարչական ակտի վարչական կարգով բողոքարկման հստակ ժամկետներ և այդ ժամկետների խախտման խիստ հետևանքներ՝ ընդհուպ մինչև վարչական ակտի բողոքարկման իրավունքից զրկում նույնիսկ այդ ժամկետները հարգելի պատճառով բաց թողնելու պարագայում, մյուս կողմից նույն վարչական ակտի՝ դատական կարգով վիճարկման համար որևէ ժամկետային սահմանափակում չի նախատեսում դատարանի կողմից հարգելի ճանաչված պատճառների առկայության դեպքում: Այսինքն՝ միևնույն վարչական ակտը, որի վարչական կարգով բողոքարկման բոլոր հնարավորություններն սպառվել են, անձը կարող է վիճարկել դատարանում: Դա նշանակում է, որ միևնույն հարցի շուրջ իրավունքի տարբեր ճյուղերի նորմերով սահմանված են տրամաբանորեն միմյանց հակասող կարգավորումներ: Անհասկանալի է, թե ինչ տրամաբանություն է դրված դատական և վարչական կարգով վարչական ակտի բողոքարկման իրավունքի իրականացման տարբերակված ընթացակարգերի սահմանման հիմքում: Ինչու՞ միևնույն պայմաններում վարչական ակտը պետք է վարչական կարգով դառնա անբողոքարկելի, սակայն դրա դատական կարգով վիճարկումը լինի միանգամայն հնարավոր: Մենք գտնում ենք, որ անկախ նրանից, թե խնդիրը գտնվում է դատավարական, թե նյութաիրավական կարգավորման դաշտում, դրա էությունը չի փոխվում. անհրաժեշտ է սահմանել վարչական ակտի թե՛ դատական, թե՛ վարչական կարգով բողոքարկման միասնական ընթացակարգ այն առումով, որ առանձին հարցերի, մասնավորապես՝ բողոքարկման ժամկետների տարբերակման անհրաժեշտություն տվյալ դեպքում առկա չէ: Բացի այդ, ներկայիս կարգավորումը կարող է նաև չարաշահումների տեղիք տալ և հանգեցնել դատարանների ծանրաբեռնվածության անհարկի ավելացման: Սակայն դա հարցի ընդամենը տեխնիկական կողմն է. այստեղ, ինչպես նշվեց, առավել կարևոր է այն, որ միևնույն բովանդակությունն ունեցող հարցին տարբեր օրենսդրական ակտերով տարբեր լուծումներ են տրվել, և այս առումով դրանց համապատասխանեցման և միասնականացման անհրաժեշտությունն ակնհայտ է: Ի դեպ, խնդիրը առավել հանգամանալից ներկայացնելու նպատակով կցանկանալինք որոշակի համեմատություն անցկացնել իր էությամբ վիճարկման հայց ներկայացնելու ժամկետին բավանականաչափ մոտ հայցային վաղեմության ժամկետի առանձին կողմերի հետ: Խոսքը մասնավորապես վերաբերում է հայցային վաղեմության ժամկետի կիրառման առանձնահատկություններին՝ քրեական գործով քաղաքացիական հայց հարուցված լինելու պայմաններում: ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 154-րդ հոդվածի 4-րդ մասի համաձայն՝ քրեական դատավարությունում քաղա-

քացիական հայցի վրա չեն տարածվում քաղաքացիական օրենսդրությամբ սահմանված հայցային վաղեմության ժամկետները: Նշված հոդվածի բովանդակությունից հետևում է, որ անկախ նրանից, թե քրեական գործը տուժողին վնաս պատճառած արարքը կատարվելուց հետո երբ է հարուցվել, և այդ ընթացքում արդյոք անցել է քաղաքացիական օրենսդրությամբ սահմանված հայցային վաղեմության ժամկետը, թե ոչ, քրեական գործով անձը կարող է ցանկացած պահի հարուցել քաղաքացիական հայց, և քրեական գործը քննող դատարանը այն չի կարող մերժել հայցային վաղեմության ժամկետն անցած լինելու պատճառաբանությամբ: Այս կարգավորմանը հակառակ՝ ՀՀ քաղաքացիական օրենսգրքը քաղաքացիական հայցը քրեական գործով հարուցված լինելու առումով հայցային վաղեմության ժամկետի կիրառումից բացառություն չի նախատեսում: Հետևաբար ստացվում է, որ վնաս պատճառած միևնույն արարքի վերաբերյալ քաղաքացիական գործ քննող դատարանը պետք է կիրառի հայցային վաղեմության ժամկետ, իսկ քրեական գործ քննող դատարանը՝ ոչ:

Այս տեսանկյունից հետաքրքիր է, թե ինչպես է ՀՀ-ում ձևավորված դատական պրակտիկայում լուծվել քրեական դատավարության օրենսգրքի այն դրույթի նախատեսմամբ հարուցված խնդիրը, որով հայցային վաղեմության ժամկետը չի կիրառվում քրեական գործով հարուցված քաղաքացիական հայցի նկատմամբ: Խնդիրը նրանում է, որ քրեադատավարական այդ նորմի օգտագործմամբ հնարավոր է դառնում շրջանցել քաղաքացիական օրենսդրությամբ սահմանված հայցային վաղեմության ժամկետը: Այս առումով հիշատակման արժանի են ՀՀ վճռաբեկ դատարանի՝ առանձին քրեական գործերով կայացրած որոշումները, որոնցով վճռաբեկ դատարանը միմյանցից տարանջատում է միևնույն արարքի կատարման դեպքում անձի իրավունքների պաշտպանության քրեաիրավական և քաղաքացիաիրավական միջոցները: Մասնավորապես՝ թիվ ԵԿԴ/0102/01/11 քրեական գործով 08.06.2012թ. որոշմամբ ՀՀ վճռաբեկ դատարանը վաշխառության հետևանքով տուժողին պատճառված վնասի հատուցման վերաբերյալ այն իրավական դիրքորոշումն է արտահայտել, որ վաշխառության վերաբերյալ գործեր քննելիս դատարանը լուծում է միայն անձին քրեական պատասխանատվության ենթարկելու հարցը և իրավասու չէ անդրադառնալ ապօրինի գործարքով տուժողին պատճառված վնասի փոխհատուցման խնդրին: Նման դեպքերում պետությունը պարտավոր չէ գործող քաղաքացիական օրենսդրության պահանջների անտեսմամբ գործարքներ կնքած քաղաքացիների գույքային և այլ իրավունքների վերականգնումը դիտել հանրային շահի տիրույթում և հանրային միջոցներ ծախսելով՝ իրականացնել նշված մասնավոր շահե-

ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅՈՒՆ

րի քրեախրավական պաշտպանություն:

Այդ մասնավոր շահերի պաշտպանությունը, որպես ընդհանուր կանոն, պետք է կատարվի մասնավոր իրավունքի տիրույթում՝ քաղաքացիախրավական և քաղաքացիադատավարական միջոցներով:

Թիվ ԵՇԳ/0037/01/11 քրեական գործով 08.06.2012թ. կայացված որոշմամբ, որը վերաբերում է խարդախությամբ անձին պատճառված վնասի հատուցմանը, ՀՀ վճռաբեկ դատարանը, սահմանելով քրեախրավական ներգործության միջոցները քաղաքացիախրավական ներգործության միջոցներից տարբերակելու հիմքերը, արձանագրել է, որ այն դեպքում, երբ քաղաքացիախրավական պարտավորությունների խախտումն իր մեջ չի պարունակում քրեական օրենսգրքի համապատասխան հոդվածով նախատեսված հանցակազմի հատկանիշները, նշված արարքը կատարած անձի նկատմամբ քրեախրավական ներգործության միջոցների կիրառությունը բացառվում է: Այս դեպքում քաղաքացիական իրավունքների պաշտպանությունը տուժողի հայեցողությամբ պետք է կատարվի մասնավոր իրավունքի տիրույթում՝ քաղաքացիախրավական և քաղաքացիադատավարական միջոցներով:

Մինևույն ժամանակ վճռաբեկ դատարանն արձանագրել է, որ այն դեպքում, երբ քրեական օրենքով արգելված արարքի հետևանքով որևէ անձի գույքային վնաս է պատճառվել, քրեական պատասխանատվությունից բացի, դրա հետ համակցության մեջ, կարող են գործել նաև քաղաքացիախրավական պատասխանատվության միջոցները:

Ինչ վերաբերում է վարչական ակտերի վարչական կարգով բողոքարկման և դատական կարգով վիճարկման ժամկետների տարբերակված կարգավորման նախատեսմանն այն առումով, որ վարչական կարգով բողոքարկման ժամկետային սահմանափակումները չեն գործում վարչական ակտի դատական կարգով վիճարկման դեպքում, ապա այս կապակցությամբ ցանկանում ենք նշել, որ այստեղ որևէ նշանակություն չպետք է տրվի վարչական ակտի վիճարկման եղանակին, և որոշակի ժամկետներ անցնելուց հետո այն պետք է անբողոքարկելիության հատկանիշ ձեռք բերի նաև դատական կարգով վիճարկման համար: Հիշյալ համատեքստում Օրենքով և վարչական դատավարության օրենսգրքով սահմանված վարչական ակտի վիճարկման ժամկետների միասնականացման նպատակով առաջարկում ենք, որ Օրենքով նախատեսված վարչական ակտի անբողոքարկելի դառնալու ժամկետներն անցնելը հիմք լինի նաև դատական կարգով վիճարկման համար ակտի անբողոքարկելի դառնալու համար: Ու որպեսզի անձը հնարավորություն ունենա Օրենքի 101-րդ հոդվածով սահմանված՝ վնասի հատուցում պահանջելու եռամյա ժամկետը իր հայեցողությամբ, առանց խոչընդոտների տնօրինելու, առաջարկում ենք այդ եռամյա ժամկետի հաշվարկի սկիզբ համարել վնաս պատճառած վարչական ակտի անվավեր ճանաչման պահը:

¹ Ընդունվել է 05.12.2013թ., ուժի մեջ է մտել 07.01.2014թ.: Տե՛ս ՀՀՊՏ 2013.12.28/73(1013).1 Հոդ.1186.1:

² Տե՛ս Скворцов А.В. К вопросу о применении части 4 статьи 198 АПК РФ, С. 7.

³ Տե՛ս նույն տեղը, էջ 7:

⁴ Տե՛ս Исаева Е. В. Процессуальные сроки в гражданском и арбитражном процессе. М., 2005. С. 95.

⁵ Տե՛ս Алешкин А. А. применение исковой давности как способ сокращения срока рассмотрения дела, Вестник Челябинского государственного университета. 2011. № 35(250). Право. Вып. 30. С. 66.

⁶ Տե՛ս Федорович Б.А. О последствиях несоблюдения срока обращения в арбитражный суд с заявлением о признании ненормативного правового акта недействительным, С. 2.

⁷ Տե՛ս Алешкин А. А.նշված աշխատ., էջ 66:

⁸ Տե՛ս Федорович Б. А., նշված աշխատ., էջ 2:

⁹ Տե՛ս Скворцов А.В., նշված աշխատ., էջ 8:

¹⁰ Տե՛ս նույն տեղը, էջ 11:

¹¹ Ընդունվել է 18.02.2004թ., ուժի մեջ է մտել 31.12.2004թ.: Տե՛ս ՀՀՊՏ 2004.03.31/18(317): Այսուհետ՝ նաև Օրենք:

¹² Տե՛ս, օրինակ, ՀՀ վճռաբեկ դատարանի՝ թիվ ՎԳ-2/0216/05/09 վարչական գործով 02.04.2010թ. որոշումը:

Օգտագործված իրավական ակտերի, գրականության և պրակտիկայի նյութերի ցանկ

1. ՀՀ վարչական դատավարության օրենսգիրք (05.12.2013թ.), ՀՀՊՏ 2013.12.28/73(1013) .1 Հոդ.1186.1 (www.arlis.am):
2. «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենք, ՀՀՊՏ 2004.03.31/18(317) (www.arlis.am):
3. Алешкин А. А. Применение исковой давности как способ сокращения срока рассмотрения дела, Вестник Челябинского государственного университета. 2011. N 35(250). Право. Вып. 30. С. 65-67.
4. Исаева Е. В. Процессуальные сроки в гражданском и арбитражном процессе. М., 2005. 224 С..
5. Скворцов А.В. К вопросу о применении части 4 статьи 198 АП РФ.
6. Федорович Б. А. О последствиях несоблюдения срока обращения в арбитражный суд с заявлением о признании ненормативного правового акта недействительным.
7. ՀՀ վճարելի դատարանի՝ թիվ ՎԴ-2/0216/05/09 վարչական գործով 02.04.2010թ. որոշում (www.arlis.am):
8. ՀՀ վճարելի դատարանի՝ թիվ ԵԿԴ/0102/01/11 քրեական գործով 08.06.2012թ. որոշում (www.arlis.am):
9. ՀՀ վճարելի դատարանի՝ թիվ ԵԸԴ/0037/01/11 քրական գործով 08.06.2012թ. որոշում (www.arlis.am):

Паргев Сароян

Аспирант кафедры конституционного права юридического факультета Ереванского государственного университета

РЕЗЮМЕ

Сроки административного обжалования административного акта и его оспаривания в судебном порядке

Предпосылкой возмещения ущерба, причиненного администрированием, является признание правового акта, действия или бездействия, которым причинен ущерб, неправомерным. В этом контексте большое значение приобретает в установленные законодательством сроки и порядке оспаривание административного акта, причинившего ущерб. Анализ законодательства РА показывает, что сроки, предусмотренные для оспаривания административного акта в административном и судебном порядке не являются едиными, что может вызвать проблемы в процессе оспаривания административного акта.

Ключевые слова: *материально-правовой срок, процессуальный срок, административное обжалование административного акта, оспаривание административного акта в судебном порядке, решение о возвращении искового заявления, решение об отказе в принятии к производству искового заявления, восстановление пропущенного срока.*

Pargev Saroyan

PhD student of the Chair of Constitutional Law of the faculty of law of the Yerevan State University

SUMMARY

Timeframe for administrative appeal and judicial litigation of an administrative act

A precondition for compensation of damage caused by administration is the recognition as unlawful of the legal act, action or inactivity that caused the damage. In the given context the appeal of the administrative act, which caused the damage, according to terms and order defined by legislation gains a great importance. The analyses of the RA legislation shows that there are no common timeframes for administrative and court appeals of administrative acts which can cause problems in the process of appeal of administrative acts.

Keywords: *substantive timeframe, administrative appeal of administrative act, decision on returning of the complaint, decision on the rejection of the complaint, restoration of missed time limits.*